PRESS RELEASE

PR23/118

ԱՄՀ-ն աշխատակազմի մակարդակով համաձայնություն է ձեռք բերում Հայաստանի «Պահուստային ծրագրի» շրջանակում առաջին ամփոփիչ ստուգման շուրջ

Անհապաղ հրապարակման համար

Առաքելության ավարտին կազմվող մամուլի հաղորդագրությունները ներառում են ԱՄՀ աշխատակազմի թիմերի հայտարարությունները, որոնք փոխանցում են երկիր կատարած այցից հետո նախնական եզրահանգումները: Սույն հայտարարության մեջ արտահայտված են ԱՄՀ աշխատակազմի տեսակետները և պարտադիր չէ, որ ԱՄՀ Գործադիր խորհրդի տեսակետները ներկայացնեն: Սույն առաքելության նախնական եզրահանգումների հիման վրա աշխատակազմը կկազմի զեկույց, որը ղեկավարության կողմից հաստատվելու դեպքում կներկայացվի ԱՄՀ Գործադիր խորհրդին՝ քննարկման և որոշման կայացման համար:

- Աշխատակազմի մակարդակով ձեռք է բերվել ԱՄՀ օժանդակությամբ Հայաստանի Հանրապետության տնտեսական բարեփոխումների ծրագրի առաջին ամփոփիչ ստուգումն ավարտելու շուրջ համաձայնություն՝ բարձր տնտեսական ակտիվության, բայց նաև նշանակալից անորոշության համատեքստում:

- 2023 թ.սպասվում է, որ աճը կդանդաղի, սակայն բարձր կմնա: Գնաճը կշարունակի մեղմանալ, սակայն բարձր պահանջարկը, այդ թվում՝ միջսահմանային տեղաշարժերը, և կապիտալի ներհոսքերը, ռիսկեր է առաջացնում:

- Տնտեսական և ֆինանսական կայունության պահպանումը և ավելի բարձր ու ավելի ներառական աճը խթանող բարեփոխումները շարունակելը քաղաքականության առաջնահերթությունն են:

Վաշինգտոն, Կ.Շ. –13 ապրիլ, 2023 թվական. 2023 թվականի մարտի 9-21-ի ընթացքում Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) թիմը, Իվա Պետրովայի ղեկավարությամբ, ԱՄՀ օժանդակությամբ Հայաստանի Հանրապետության տնտեսական բարեփոխումների ծրագրի առաջին ամփոփիչ ստուգման համար քննարկումներ է անցկացրել: ԱՄՀ տնօրենների խորհրդի կողմից «Պահուստային ծրագիրը» (SBA) հաստատվել է 2022 թվականի դեկտեմբերի 12-ին: Քննարկումների ավարտին տկն.Պետրովան արել է հետևյալ հայտարարությունը.

«ԱՄՀ թիմն Հայաստանի իշխանությունների հետ եռամյա «Պահուստային ծրագրի» օժանդակությամբ իրականացվող տնտեսական բարեփոխումների առաջին ամփոփիչ ստուգումը եզրափակելու շուրջ աշխատակազմի մակարդակով համաձայնություն է ձեռք բերել: Համաձայնությունը ենթակա է հաստատման ԱՄՀ գործադիր խորհրդի կողմից, որը

700 19th Street NW
Washington, DC 20431
USA

նախատեսվում է, որ այս ամփոփիչ ստուգումը կդիտարկի հունիսի կեսին և Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդի իրավասությունների, թափանցիկության, հաշվետվությունների ներկայացման և կենսունակության պահանջների հստակեցման նախապայման գործողության իրականացումից հետո: Թեև Խորհրդի նիստից հետո 24.8 միլիոն դոլար (18.4 միլիոն ՓՀԻ) հասանելի կդառնա, իշխանությունները նախատեսում են ԱՄՀ օժանդակությամբ ծրագիրը դիտարկել որպես կանխարգելիչ:

2022 թվականին Հայաստանի տնտեսության ՀՆԱ-ի աճը հրապարակվել է 12.6 տոկոս, իսկ տնտեսական ակտիվության բարձր իմպուլսը պահպանվել է 2023 թվականի սկզբին: ՀՆԱ-ի նման նշանակալի աճին էականորեն նպաստել է 2022 թվականի մարտից սկսած շուրջ 2600 ընկերությունների, 6000 անհատ ձեռնարկատիրոջ և 113 հազար ոչ ռեզիդենտների տեղափոխվելը Հայաստան: 2023 թվականի մարտին ՍԳԻ տարեկան գնաճը կազմել է 5.4 տոկոս (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ)՝ նվազելով 2022 թվականի հունիսի բարձրակետից՝ 10.3 տոկոսից: Բյուջեի ընդհանուր պակասուրդը նվազել է՝ կազմելով ՀՆԱ-ի 2.1 տոկոսը, իսկ կենտրոնական կառավարության պարտքը 2022 թվականին նվազել է մինչև ՀՆԱ-ի 46.7 տոկոսը: Արտաքին դիրքն ամրապնդվել է՝ հիմնականում ծառայությունների առևտրի վերելքի շնորհիվ: ՀՀ ԿԲ միջազգային պահուստները 2022 թվականին ավելացել են 870 միլիոն դոլարով, իսկ դրամն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է շուրջ 25 տոկոսով: Բանկային համակարգը շարունակել է մնալ լավ կապիտալացված և բարձր իրացվելի և զգալի շահույթներ է ապահովել:

«Սպասվում է, որ աճը կմեղմանա, բայց բարձր կպահպանվի՝ շուրջ 5.5 տոկոս 2023 թվականին՝ պայմանավորված սպառմամբ և ներդրումներով: Կանխատեսվում է, որ գնաճը մինչև 2023 թվականի վերջն ավելի կթուլանա՝ պայմանավորված դրամավարկային պայմանների խստացման և դրամի արժևորվման լագային ազդեցություններով և ներմուծված սննդամթերքի և էներգակիրների ավելի ցածր գներով: Սակայն արտաքին դժվարին միջավայրի պայմաններում հեռանկարի ռիսկերը բացառիկ բարձր են պահպանվում: Համաշխարհային տնտեսության աճի տեմպի հնարավոր դանդաղումը, ֆինանսական ավելի խիստ պայմանները և պակաս առևտուրն ու կապիտալի ներհոսքերը կարող են բացասաբար անդրադառնալ աճի վրա: Դրական է այն, որ կապիտալի և միգրանտների շարունակական ներհոսքի հաշվին բարձր պահանջարկն ու գնաճային ճնշումները կարող են պահպանվել: Կառավարության 2021-2026 թվականների բարեփոխումների հավակնոտ օրակարգի հաստատուն իրականացումը կարող է միջնաժամկետ ավելի բարձր աճի հանգեցնել:

Ելնելով հեռանկարի բարձր անորոշությունից և գերտաքացման ռիսկերից՝ 2023 թվականի բյուջեի իրականացմամբ և բյուջեի ծրագրերով անհրաժեշտ է խուսափել ավելացուկային պահանջարկի ճնշումներ ստեղծելուց: 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով անհրաժեշտ է հավասարակշռություն ապահովել մակրոտնտեսական կայունության պահպանման և Հայաստանի զարգացմանն օժանդակելու միջև: Կառավարության 2024-2026 թվականների ծրագրով նախատեսված՝ առողջապահության, աշխատավարձերի, կրթության, սոցիալական պաշտպանության և ենթակառուցվածքների ավելի բարձր ծախսերի առաջնահերթությունն անհրաժեշտ է զգուշությամբ սահմանել: Ողջունելի են կառավարության՝ ծախսերի արդյունավետության բարձրացման, հանրային ֆինանսների կառավարման կատարելագործման, այդ թվում՝ հարկաբյուջետային ռիսկերի հուսալի կառավարման, թափանցիկության և կառավարման միջոցով, և ավելի որակյալ հանրային ներդրումների ապահովմանն ուղղված ջանքերը: Հարկային անարդյունավետ ծախսերի բացառումը և եկամուտների վարչարարության հզորացումը կարևոր նշանակություն կունենան առաջնահերթ ծախսերի համար հարկաբյուջետային հնարավորությունների (ֆիսկալ տարածք) ստեղծման հարցում:

«Դրամավարկային քաղաքականությունը վճռականորեն և նախաձեռնողաբար իրականացնելու շնորհիվ հաջողվել է գնաճային ճնշումները զսպել, իսկ քաղաքականության հետագա փոփոխություններն անհրաժեշտ է, որ գնաճի զարգացումներից և գնաճի սպասումներից կախված մնան: Կապիտալի շուկայի զարգացումը խթանելու, ֆինանսական ներառումը խորացնելու, իրացվելիության կառավարումը բարելավելու և ՀՀ ԿԲ հաղորդակցության ռազմավարությունը կատարելագործելու ջանքերն է՛լ ավելի կբարձրացնեն դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը: Աշխատակազմը ողջունում է պահուստների առողջ բուֆերների և փոխարժեքի ճկունության պահպանման ՀՀ ԿԲ հանձնառությունը, որը Հայաստանի տնտեսությանն օգնել է առկա արտաքին ցնցումների կլանման հարցում:

Աշխատակազմը ողջունում է ՀՀ կենտրոնական բանկի ռիսկի վրա հիմնված վերահսկողությունն ուժեղացնելու, միջազգային չափանիշներին համահունչ բանկերի վերակառուցման շրջանակի մշակման և բանկերին իրենց ռիսկերի կառավարման գործընթացները բարելավելու հարցում խրախուսելու ծրագրերը: Ֆինանսական համակարգի փաստացի ռիսկերի շարունակական մշտադիտարկումը և մակրոպրուդենցիալ գործիքների կատարելագործումը կօգնեն բնակարանային զների և հիփոթեկային վարկավորման արագ աճի հետ կապված ռիսկերի զսպմանը: Հիփոթեքային վարկերի տոկոսների վերադարձի կիրառման և առատաձեռնության սահմանափակումը կարևոր նշանակություն կունենա բնակարանային շուկայի ռիսկերի հետագա մեղմացման հարցում:

«Կառավարության կառուցվածքային բարեփոխումների օրակարգում պատշաճ ուշադրություն է դարձվում ներառական աճի խթանմանը, այդ թվում՝ գործարար միջավայրի բարելավմանը, արտադրողականության բարձրացմանը, գործազրկության և աղքատության կրճատմանը և կլիմայի փոփոխությանն առնչվող ռիսկերի դիմագրավմանը: Այս նպատակների իրագործումը պահանջում է ավելի ամուր առևտրային կապերի զարգացում, հաղորդակցությանն օժանդակող ենթակառուցվածքի ստեղծում, տրանսպորտի, հողերի և ջրի կառավարման բարելավում և կանաչ էներգաարտադրության խրախուսում, ֆինանսական ծառայությունների հասանելիության, աշխատուժի մասնակցության խթանում, կառավարման բարեփոխումների ավարտում և ոչ ֆորմալության կրճատում: Անհրաժեշտ է, որ թվայնացման խորացումը գլխավորի հանրային կառավարման բարեփոխումները և բարելավի հանրային կառավարման ծառայությունների որակն ու տրամադրումը:

«ԱՄՀ թիմը շնորհակալություն է հայտնում ՀՀ իշխանություններին, մասնավոր հատվածին և զարգացման գործընկերներին՝ արգասաբեր քննարկումների և համագործակցության համար»: